«Նոր ժամանակի կրթություն» ՀԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման՝

Սովորողների մեջ համագործակցային կարողությունների ձևավորումը առարկայի / անգլերենի / դասավանդման գործընթացում:

Առարկան՝ ***Անգլերեն***

Հետազոտող ուսուցիչ՝

Նաիրա Մինասյան

Ուսումնական հաստատություն՝

Երևանի Ա. Երզնկյանի անվան հ. 118 ավագ դպրոց

Երևան 2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն……3
1. Կոլեկտիվ ուսումնական պարապմունքների սկզբունքները……4
2. Ինքնակառավարման համակարգը……5
3. Ուսումնական առարկայի / անգլերենի/ բովանդակության կառուցվածքը……11
Եզրակացություն……16
Գրականություն……..……17

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Պատմահասարակական զարգացման ներկայիս ժամանակահատվածում կրթության կազմակերպման առումով կարելի է նկատել հետևյալ կարևոր հանգամանքը. կատարվում է անցում մի կրթական իրողությունից մեկ այլ, առաջվանից բոլոր առումներով տարբերվող իրողության:

Այսօրվա կրթությունը միտված է սովորողի մոտ ձևավորել ՀՊՉ-ով նախատեսված կարողունակություններ[1], որի արդյունքում կունենանք շրջանավարտներ, որոնք ուսումնառության և դաստիարակության գործընթացում ձեռք բերված գիտելիքի, արժեքների , հմտությունների և դիրքորոշումների հիման վրա կարող են արդյունավետ և պատշաճ արձագանքել իրավիճակին:

Փոխազդեցությունների և հարաբերությունների առումով կատարվում է անկախ գոյակցության և ազատ մրցակցային տեսակից անցում համագործակցայինի:

Հետազոտական աշխատանքի նպատակն է բացահայտել թե ինչպես է թեմաների փոխհաղորդման մեթոդիկան նպաստում սովորողների մոտ համագործակցային կարողությունների զարգացմանը:

1. Կոլեկտիվ ուսումնական պարապմունքների սկզբունքները

Ուսուցման կազմակերպման կոլեկտիվ եղանակը ենթադրում է ուսումնական խմբի անդամների համընդհանուր համագործակցության վրա հիմնված ուսումնական պարապմունքներ[3]: Այլ կերպ ասած , ուսումնական խմբի յուրաքանչյուր անդամ իր ուսումնական խնդիրներն ու նպատակները իրագործում է խմբի մյուս անդամների օգնությամբ , միաժամանակ ինքն էլ օգնում է մյուսներին՝ լուծելու իրենց ուսումնական հարցերը:

Սովորողների համագործակցությունն ու փոխօգնությունը կարող են դրսևորվել հետևյալ ձևերով.

1. Փոխուսուցում
2. Համատեղ ուսումնասիրություն
3. Թեմատիկ քննարկում
4. Փոխստուգում
5. Փոխվարժանք

Այս ձևերը փոխկապակցված են, և սովորողների հաղորդակցության ժամանակ բոլորն էլ այս կամ այն կերպ առկա են:

Սակայն, կախված տարբեր առարկաների և թեմաների յուրահատկություններից՝ ուսուցման պրոցեսում նախապատվությունը տրվել է ուսուցման կոլեկտիվ եղանակի այս կամ այն մեթոդիկային: Բացի այդ, կոլեկտիվ ուսումնական պարապմունքի կազմակերպման գործում ակտիվորեն ներգրավվում են սովորողները /այսինքն՝ սովորողների ինքնակառավարումը դրսևորվում է նաև ուսումնական պրոցեսում/ :

Այս հանգամանքը նկատելիորեն դրսևորված է կոլեկտիվ ուսումնական պարապմունքների ընթացքում կիրառվող ընդհանուր մեթոդիկաներում:

Ուսուցման կազմակերպման դաս-դասարանային համակարգը / ուսուցման խմբային եղանակ/ իր կառուցվածքով անհրաժեշտություն չունի, որ սովորողները կառավարման համակարգում ինչ-ինչ գործառույթներ կատարեն: Ավելի արդյունավետ է, որ այդ ամենը կատարի ուսուցչական կոլեկտիվը: Դրան հակառակ, ուսուցման կազմակերպման կոլեկտիվ եղանակի համակարգում, շատ բարդ կլինի կազմակերպել և՛ ուսումնական պրոցեսը, և՛ դաստիարակչական աշխատանքները, եթե սովորողները չընդգրկվեն կառավարման համակարգում:

2. Ինքնակառավարման համակարգը

Ինքնակառավարման համակարգը դիտարկվում է 2 հարթության վրա:

I հարթությունը ուսումնական գործընթացն է /ինչ է իրենից ներկայացնում ինքնակառավարման համակարգը ուսումնական գործընթացում, ինչպես է կառավարվում ուսումնական գործընթացը և ինչպես են սովորողները ընդգրկվում այդ գործընթացում/:

II հարթությունը ուսումնական գործընթացից դուրս իրողությունն է, բայց ուսումնական գործընթացի վերաբերյալ: Ինքնակառավարման համակարգի կառուցվածքի միավորների մի մասը գործում են միայն ուսումնական գործընթացում /դրանից դուրս չեն գործում/, մյուս միավորները գործում են ուսումնական գործընթացից դուրս /ուսումնական գործընթացում չկան/, բայց վերաբերում են ուսումնական գործընթացին:

Ինքնակառավարման համակարգի կառուցվածքային միավորները՝

1. ուսումնական խումբ 25-30 սովորող/քանակը կարող է փոխվել/
2. հաստատուն կազմով ենթախմբեր /ջոկատներ/
3. ջոկատի ղեկավար սովորողներից, ջոկատի ավագ
4. ավագների խորհուրդ, դասղեկ, ուսուցիչներ, ջոկատների ավագներ
5. համահավաք /հարափոփոխ/ ենթախմբեր / 2-10 սովորող/
6. համահավաք /հարափոփոխ/ ենթախմբի համակարգող /կարող է և պետք է լինի յուրաքանչյուրը/
7. հերթապահ ջոկատ
8. հերթապահ ջոկատի ավագ

1-4-րդ միավորները II հարթության միավորներ են / գործում են ուսումնական գործընթացից դուրս/:

5-8-րդ միավորները I հարթության միավորներ են /գործում են ուսումնական գործընթացում/:

Ինքնակառավարման համակարգի վերոնշյալ միավորները մասնակցում են ուսումնական գործընթացի կազմակերպման կառավարման, վերահսկման, ղեկավարման աշխատանքներին:

10-րդ դասարանում ուսումնական տարվա առաջին իսկ օրերից կազմավորվում են 5-7 անդամ ունեցող հերթապահ ջոկատներ, որոնք օգնում են ուսուցչին կազմակերպելու ուսումնական գործընթացը: Հերթապահ ջոկատի կազմը անփոփոխ է մնում ուսումնառության 3 տարիների ընթացքում: Ջոկատի առկայությունը մեծ հետաքրքրություն է առաջացնում ծնողների շրջանում, նրանց հատկապես ուրախացնում է այն փաստը, որ երեխաները մասնակցնում են ուսումնական գործընթացի կազմակերպմանը՝ դրանով իսկ ուսուցչին թողնելով ավելի շատ ժամանակ գիտելիք հաղորդելու գործում:

Ջոկատները ընտանիքների անալոգներն են:

Այսպես, ինչպես ընտանիքի տարբեր անդամները առավոտյան գնում են աշխատանքի, դպրոց և այլն և երեկոյան հավաքվում են ու քննարկում օրվա ընթացքում իրենց հետ կատարվածը, այնպես էլ ջոկատները պարապմունքներից հետո քննարկում են ամբողջ օրվա իրենց գործունեությունը:

Ջոկատների ձևավորման ընթացքում հնարավոր են դժգոհություններ .«Ես չեմ ուզում այս խմբում լինել», «Ես ուզում եմ խումբս փոխել» և այլն: Այս պարագայում հարկավոր է նրբանկատ մոտեցում ցուցաբերել: Այդ խնդիրը լուծվում է նույն սկզբունքով , ինչ սովորողին դասարանից դասարան տեղափոխելիս:

Ջոկատներն ունենում են ավագներ, որոնք դասղեկի հետ միասին կազմում են ավագների խորհուրդ:

Ավագները կարող են ընտրվել 2 ճանապարհով.

1. նախ ձևավորվում են ջոկատները, ապա յուրաքանչյուր ջոկատ ընտրում է ավագ.

2. նախ ամբողջ ուսումնական խումբը ընտրում է ավագներին, ապա յուրաքանչյուր ավագի շուրջը ձևավորվում են ջոկատները /տրամաբանությունը հետևյալն է. ամբողջ ուսումնական խմբի գործունեությունը ծրագրում,

կազմակերպում, կառավարում և հսկում է ավագների խորհուրդը, հետևաբար յուրաքանչյուր ավագ անտարբեր չէ այն բանի նկատմամբ, թե ովքեր են լինելու ավագների խորհրդի մյուս անդամները/:

Ձոկատների ավագների պարտականությունն է ջոկատների խնդիրները ներկայացնել ավագների խորհրդի քննարկմանը, ինչպես նաև քննարկման արդյունքում ընդունված որոշումները, լուծումները ներկայացնել /հասանելի դարձնել/ ջոկատների անդամներին:

Ուսումնական խմբում սահմանվում են ջոկատների հերթապահության գրաֆիկ: Հերթապահ ջոկատը ուսումնական գործընթացում զբաղված է այնքանով, որքանով ազատ է կոորդինացիոն աշխատանքից: Հետևաբար, հերթապահության ընթացքում հերթապահ ջոկատի անդամներն ակտիվ չեն ուսումնական գործընթացում: Այդ է պատճառը, որ նրանց ուսումնական պլանը հերթապահության շաբաթվա համար կազմվում է հաշվի առնելով հերթապահության հանգամանքը:

Սկզբնական շրջանում հարց է ծագում, թե արդյոք ուսուցչին օգնող հերթապահ ջոկատի անդամները հետ չեն ընկնում իրենց ուսումնական գործընթացից: Իրականությունն այն է, որ եթե նույնիսկ նրանք 10 րոպե ծախսում են այդ աշխատանքի վրա , ապա մյուս օրերին անպայման լրացնում են այդ բացը, քանի որ հերթապահ ջոկատը փոխվում է շաբաթը մեկ :

Ինչպես է ընթանում ուսումնական պրոցեսը

Ենթադրենք սկսվում է անգլերենի ուսումնական գործընթաց է, որը պետք է ընթանա ընդհանուր ճակատի բացակայության հանգամանքներում, այսինքն՝ տարբեր սովորողներ տարբեր գործողություններ են կատարում: Ուսումնական գործընթացի կազմակերպչական միավորը համահավաք / հարափոփոխ/ խումբն է: Ուսումնական գործընթացն ընթանում է հարափոփոխ խմբերում: Այսինքն՝ մի քանի սովորողներ միասին որոշ ժամանակ ձևավորվում են որպես հարափոփոխ խումբ որոշակի ուսումնական խնդիր լուծելու համար:

Առաջին կարևոր հանգամանքն այն է, թե ինչ խնդիր են լուծում:

Ուսումնական գործընթացի մեկնարկն անցած նյութի կրկնությունն է , որն իրականացվում է անհատական հանձնարարությունների փոխստուգման

մեթոդիկայով: Այն սովորողները, որոնք ավարտում են անցած նյութի կրկնությունը, դուրս են գալիս իրենց համահավաք խմբից և ձևավորում նոր համահավաք խումբ՝ թեմաների փոխհաղորդման մեթոդիկայով նոր նյութ ուսումնասիրելու համար՝ ծրագրի յուրացման իրենց անհատական ուսումնական երթուղուն համապատասխան, որոնք կազմված են՝ հաշվի առնելով բաժինների և թեմաների փոխադարձ կապերն ու փոխկապակցվածությունը:

Երբ մի պահ նայում ես, տարբեր խմբեր տարբեր աշխատանք են կատարում: Որոշ ժամանակ անց կտեսնենք էլի նույն պատկերը /տարբեր խմբեր տարբեր աշխատանքներ են կատարում/, բայց փոփոխված կազմով: Խմբի անդամները, փաստորեն որոշ ժամանակ անց հայտնվում են մեկ այլ խմբում: Դա կատարվում է հետևյալ կերպ: Հարափոփոխ խմբից դուրս եկած սովորողը կարող է .

ա/ կատարել անհատական աշխատանք

բ/ ընդգրկվել որևէ գործող խմբում

գ/ ուրիշների հետ կազմավորել նոր խումբ

Երբ աշխատանքը կատարված է , խմբի կազմը փոփոխվում է : Հավանաբար դաս-դասարանային համակարգով աշխատելու կարծրատիպն էր պատճառը, որ առաջին տարիներին սովորողների՝ կրկնության հարափոփոխ խմբից նոր նյութ ուսումնասիրող հարափոփոխ խումբ տեղափոխվելը արհեստականորեն իրականացվում էր միաժամանակ և առաջանում էր որոշակի խնդիր: Թեմաների փոխհաղորդման մեթոդիկայով նոր նյութի ուսումնասիրության ժամանակ սովորողը պատրաստ էր լինում փոխուսուցման միայն ուսուցչի կողմից ստուգվելուց հետո: Առաջանում էր մի իրավիճակ, երբ միաժամանակ մեծ թվով սովորողներ ինքնուրույն յուրացնում էին նոր թեման հատուկ մշակված դիդակտիկ նյութերով և պատրաստ էին լինում ուսուցչի կողմից ստուգվելու: Բնականաբար, ուսուցիչը հնարավորություն չէր ունենում միաժամանակ բոլորին ստուգելու: Այսպիսով, պարզ է դառնում, որ ՈՒԿԵ-ի մանկավարժական տեխնոլոգիան մշակված է խիստ տրամաբանված, և ցանկացած շեղում կարող է կանգնեցնել անլուծելի կամ դժվար լուծելի խնդրի առաջ: Սակայն կարելի է արագ կողմնորոշվել, թե որ սովորողն այլևս կրկնելու կարիք չունի, և պարտադիր չէ, որ կատարի բոլոր անհատական հանձնարարությունները, հետևաբար հարափոփոխ խմբերը ձևավորվում են աստիճանաբար, և ուսուցիչը

հնարավորություն էր ունենում ստուգելու յուրաքանչյուր սովորողի առաջին քայլի որակը: Դա կատարվում է հետևյալ կերպ: Անհատական հանձնարարությունները արագ և ճիշտ կատարած սովորողներից կազմվում է առաջին հարափոփոխ խումբը, մինչ ուսումնական խմբի մյուս սովորողները շարունակում են կատարել անհատական հանձնարարությունները:

Անհատական հանձնարարությունները կատարելուց հետո սովորողները ստանում են թեմաների յուրացման անհատական երթուղիներ, որոնք կազմված են՝ հաշվի առնելով բաժինների և թեմաների փոխկախվածությունը: Յուրաքանչյուր շաբաթվա համար կազմվում է աշխատանքային քայլերի պլան , ինչը հնարավորություն է տալիս, որ սովորողը ցանկացած պահի իմանա՝ ինչով է ինքը զբաղվելու հաջորդ պահին: Սակայն ի սեր ճշմարտության պետք է ասել, որ սովորողի քայլերը պլանավորելու հմտությունը շատ դժվար է տրվում ուսուցիչների մեծ մասին, այդ թվում նաև ինձ:

Դժվարությունը հատկապես կայանում է նրանում, որ ուսուցիչը կանգնում է փակուղու առջև, երբ քայլերի հերթագայության մեջ մի օղակ կտրվում է բացակա սովորողի պատճառով: Սակայն այդ խնդիրը նույնպես կարելի է լուծել՝ տեղում անմիջապես փոխելով քայլերը կամ պարզապես ինքներս զբաղեցնելով բացակա սովորողի տեղը:

Կոլեկտիվ ուսումնական պարապմունքների կազմակերպման առաջին փուլում հնարավոր են որոշակի բացթողումներ : Կոլեկտիվ ուսումնական պարապմունքը ենթադրում է տնային աշխատանքների բացակայություն,այսինքն սովորողը ամեն ինչ պետք է անի դպրոցում : Բնականաբար, որոշ սովորողներ անմիջապես օգտվում են առիթից և դադարում են աշխատել նյութի ամրապնդման վրա տանը,որը իր հերթին բերում է ծուլության և առաջադիմության վատթարացման:Լուծելի է նաև այս խնդիրը,ամեն օր տալով տնային աշխատանք, ստուգելով դրանց առկայությունը և նշելով դրանք տնային աշխատանքների հաշվառման աղյուսակում: Արդյունքը գոհացուցիչ է լինում: Մեկ այլ մտավախություն է թողնել գնահատումը սովորողներին:Թվում է ,որ ընձեռված լինելով այդպիսի հնարավորություն ՝ սովորողները անհարկի բարձր գնահատականներ կշռայլեն,սակայն դա լինում է միայն սկզբում և պատկերը կտրուկ փոխվում է առաջին թեմատիկ աշխատանքներից

հետո:Այժմ սովորողները ավելի մեծ պատասխանատվությամբ և խստությամբ են վերաբերվում նաև այդ հարցին:

Եվս մի հարց,որ թերևս կհետաքրքրի բոլորին՝ ինչ է տալիս ուսուցման կոլեկտիվ եղանակը ուսուցչին և սովորողին: Եթե դաս- դասարանային համակարգում ամբողջ դասարանը ստիպված է նույն ժամանակահատվածում յուրացնել նույն թեման, ինչը բերում է այն բանին, որ թեման արագ յուրացրած սովորողը ստիպված է սպասել մյուսներին և աստիճանաբար վարժվել ծուլության , իսկ թեման լիարժեք չյուրացրած սովորողը ստիպված է անցնել հաջորդին, ապա ուսուցման կոլեկտիվ եղանակի դեպքում ՝ ընդհանուր ճակատի բացակայության պայմաններում , մի կողմից լավ սովորողին հնարավորություն է ընձեռվում արագ անցնել ծրագիրը և լրացուցիչ նյութ ուսումնասիրելով հարստացնել իր գիտելիքները, միաժամանակ օգնելով մյուս սովորողներին: Մյուս կողմից՝ չեն անտեսվում նաև թույլ կամ միջակ սովորողները ,որոնք կարող են անցնել նոր նյութի ուսումնասիրության միայն այն բանից հետո, երբ յուրացնում են հինը: Ոսուցման կոլեկտիվ եղանակը նաև զարգացնում է սովորողների համագործակցային հմտությունները ,որոնք անշուշտ մեծ դեր են խաղալու նրանց հետագա ամբողջ կյանքում:

Կոլեկտիվ պարապմունքների ընթացքում սովորողները նաև ձեռք են բերում կառավարման, կազմակերպման հմտություններ:

Սովորողները կատարում են հետևյալ գործառույթները՝ ընդգրկվում են կառավարման աշխատանքներում /հանդես են գալիս որպես կառավարիչ/, ընդգրկվում են ուսուցչական աշխատանքերում /սովորեցնող, ստուգող/ և սովորում են:

Անհրաժեշտ է, որ բոլոր սովորողները հերթով ընդգրկվեն այս աշխատանքներում /հատկապես կոորդինացիոն/, որպեսզի հնարավոր լինի առանց դժվարությունների կազմակերպել հարափոփոխ խմբերի աշխատանքները:

Ուսուցչի համար սա աշխատանքի կազմակերպման նոր ձև է,որն ուղղված է սովորողների կողմից նոր նյութի ավելի արդյունավետ յուրացմանը և նրանց մեջ ինքնուրույնության համագործակցային հմտությունների զարգացմանը:

3. Ուսումնական առարկայի / անգլերենի/ բովանդակության կառուցվածքը

Հետազոտական աշխատանքս հիմնված է 10-րդ լեզվագիտական դասարանում իրականացրած փոխուսուցման վրա՝ թեմաների փոխհաղորդման մեթոդիկայի կիրառմամբ: Կոլեկտիվ ուսումնական պարապմունքներ կազմակերպելու համար անհրաժեշտ էր ուսումնական ծրագիրը բաժանել առանձին բաժինների և թեմաների: Թեմա ասելով հասկանում ենք որոշակի ուսուցանվող նյութ և դրան համապատասխան ընտրված 3 խումբ խնդիրներ, վարժություններ, հարցեր և այլն:[4]

Առաջին խմբի խնդիրներն ու հարցերը բավականին պարզ են և վերաբերում են տեքստի միայն առանձին պարբերություններին: Դրանք նախատեսված են ստուգելու և ինքնաստուգելու թե որքանով է հասկացվել տվյալ պարբերությունը և տեքստում շարադրված են համապատասխան պարբերությունից անմիջապես հետո:

Երկրորդ խմբի խնդիրներն ու հարցերը առավել բարդ են : Դրանց սովորողներն անդրադառնում են տվյալ առարկայի /անգլերենի/ ուսումնասիրության ամբողջ ընթացքում:

Այդ թեմաների համար կազմվել են հատուկ տեքստեր, որոշվել է թեմաների միջև տրամաբանական կախվածության սխեման / այսինքն՝ որպեսզի սովորողը կարողանա հասկանալ Past Continuous կամ Future Continuous պետք է նախ սովորի Present Continuous/: Կազմվել են ծրագրի յուրացման երթուղիներն ըստ թեմաների:

Անհատական ծրագիր

10-րդ լեզվագիտական դասարանի սովորողների /2021-2022 ուստարի/

Առարկա՝ անգլերեն բաժին՝ Verb (V) ուսուցիչ՝ Ն. Մինասյան

R1	R2	**R3**	V1	V2	V3	V4	**V5**	V6	V7	V8	V9	**V10**	**V11**	P1	P3	P2
P4	**P5**	**P6**	L1	L2	L3	L4	L5	**LT1**	**LT2**	**ST1**	A1	A2	A3	A4	**A5**	**A6**
Ad1	Ad2	**Ad3**	**Ad4**	Pr1	Pr2	**Pr3**	**Pr4**	N1	N3	N2	N4	**N5**	**N6**	L6	L7	L8
L9	L10	L11	L12	L13	L14	L15	L16	**LT3**	**LT4**	OE1	**OE2**	**ST2**				

R1	R2	**R3**	V2	V1	V4	V3	**V5**	V7	V6	V9	V8	**V10**	**V11**	P2	P4	P1
P3	**P5**	**P6**	L1	L2	L3	L4	L5	**LT1**	**LT2**	**ST1**	A2	A1	A4	A3	**A5**	**A6**
Ad2	Ad1	**Ad3**	**Ad4**	Pr2	Pr1	**Pr3**	**Pr4**	N2	N4	N1	N3	**N5**	**N6**	L6	L7	L8
L9	L10	L11	L12	L13	L14	L15	L16	**LT3**	**LT4**	OE1	**OE2**	**ST2**				

R1	R2	**R3**	V3	V4	V1	V2	**V5**	V8	V9	V6	V7	**V10**	**V11**	P3	P1	P4
P2	**P5**	**P6**	L1	L2	L3	L4	L5	**LT1**	**LT2**	**ST1**	A3	A4	A1	A2	**A5**	**A6**
Ad1	Ad2	**Ad3**	**Ad4**	Pr1	Pr2	**Pr3**	**Pr4**	N3	N1	N4	N2	**N5**	**N6**	L6	L7	L8
L9	L10	L11	L12	L13	L14	L15	L16	**LT3**	**LT4**	OE1	**OE2**	**ST2**				

R1	R2	**R3**	V4	V3	V2	V1	**V5**	V9	V8	V7	V6	**V10**	**V11**	P4	P2	P3
P1	**P5**	**P6**	L1	L2	L3	L4	L5	**LT1**	**LT2**	**ST1**	A4	A3	A2	A1	**A5**	**A6**
Ad2	Ad1	**Ad3**	**Ad4**	Pr2	Pr1	**Pr3**	**Pr4**	N4	N2	N3	N1	**N5**	**N6**	L6	L7	L8
L9	L10	L11	L12	L13	L14	L15	L16	**LT3**	**LT4**	OE1	**OE2**	**ST2**				

Նոր քերականական նյութի յուրացման համար ունեինք դիդակտիկ նյութեր:

Ստորև ներկայացված է բայ բաժնի թեմաներից մեկը:

V1(a)

The Present Simple Tense

Ներկա անորոշ ժամանակաձև

Նպատակը

Իմանա ներկա անորոշ ժամանակաձևը:

Իմանա ներկա անորոշ ժամանակաձևի գործածությունը:

Վերջնարդյունքներ

Ճանաչի ներկա անորոշ ժամանակաձևը:

Կարողանա կիրառել այն կենդանի խոսքում:

I պ. Կազմվում է բայի ինֆինիտիվից (անորոշ դերբայ, I հիմք) առանց to մասնիկի: III դեմք, եզակի թիվն ունի s կամ es վերջավորությունը:

to speak – speak – speaks

Եթե բայը վերջանում է s, ss, sh, ch, o, x տառերով III դեմք եզակի թվում ավելացվում է es, եթե վերջանում է y-ով, որին նախորդում է բաղաձայն, y-ը փոխարինվում է I տառով+ es, օր.՝ to try-tries, but to play-plays.

1. Ինչպե՞ս է կազմվում Present Simple-ի հաստատական ձևը:
2. Ի՞նչ վերջավորություն ունի բայը III դեմք եզակի թվում:

II պ. Հարցական ձևը կազմվում է do, իսկ եզակի թիվ III դեմքը՝ does օժանդակ բայերով, որոնք դրվում են նախադասության սկզբում, ենթակային առաջ և իմաստային բայի I հիմքով:

I watch TV.	He plays.
Do I watch TV?	Does he play?

Ժխտական ձևը կազմվում է do և does օժանդակ բայերով և not ժխտական մասնիկով, որոնք դրվում են իմաստային բառից առաջ:

They speak English. He plays football.

They don't speak English. He doesn't play football.

1. Ինչպե՞ս են կազմվում Present Simple-ի հարցական ձևերը:
2. Ինչպե՞ս են կազմվում Present Simple-ի ժխտական ձևերը:

III պ. Present Simple-ը ցույց է տալիս՝

1. Սովորաբար կատարվող, պարբերաբար կրկնվող գործողություն, որը սովորաբար նշվում է հետևյալ հաճախականության մակբայներով և պարագայական կապակցություններով՝ often, always, usually, seldom, sometimes, never, ever, every day (year, month):

   He reads a newspaper every day.

   The boys usually play football on Sundays.

2. Ներկա ժամանակում իրար հաջորդող գործողություններ:

   I get up at eight o'clock, wash my hands and face and have breakfast.

3. Համընդհանուր ճշմարտություններ:

   The sun rises in the east.

4. Խոսելու պահին տեղի ունեցող գործողություն այն բայերով, որոնք չեն գործածվում

   Continuous ժամանակաձևով (to like, to love, to want, to prefer, to know, to understand, to remember, to forget, to hear, to advise և այլն):

   I understand everything now.

5. Ըստ չվացուցակի, ծրագրի պլանավորված գործողություն մոտ ապագայում՝ հիմնականում հետևյալ բայերի հետ՝ to go, to leave, to arrive, to begin.

   The film begins at 10:30.

   The train leaves at 5:30 tomorrow.

1. Ի՞նչ է ցույց տալիս Present Simple-ը:

Առաջադրանքներ

1. Հետևյալ բայերը խոնարհել ներկա անորոշ ժամանակաձևով : To go, to write, to do, to watch:
   1.1. Ավելացնել s կամ es : work, leave, wash, dress, meet
2. Նախադասությունները դարձնել հարցական և ժխտական
   They live in London.
   I often meet this engineer here.
   He writes questions at home.
   Her boyfriend lives in Eastbourne.

3. Փակագծում տրված բայերը գրել ներկա անորոշ ժամանակաձևով:

My working day (to begin) at seven o»clock. I (to get) up, (to switch) on the radio and (to do) my morning exercises. It (to take) me fifteen minutes. At half past seven we (to have) breakfast. My father and I (to leave) home at eight o»clock. He (to take) a bus to his factory. My mother (to be) a doctor, she (to leave) home at nine o»clock. In the evening we (to gather) in the living room. We (to watch) TV and (to talk).

4. Ավարտել նախադասությունները՝ օգտագործելով տրված բայերից մեկը ներկա անորոշ ժամանակաձի հաստատական կամ ժխտական ձևով:

Believe , eat, flow ,go, grow, make, rise, tell, translate

1. The earth _____round the sun.
2. Rice _____in Britain.
3. The sun _____ in the east.
4. Bees_____honey.
5. Vegetarians _____ meat.
6. An atheist _____ in God.
7. An interpreter _____from one language into another.
8. Liars are people who _____ the truth.
9. The River Amazon _____ into the Atlantic Ocean.

5. Կառուցել ճիշտ նախադասություններ

1. Julie _____(not / drink) tea very often.
2. What time _____ (the banks / close) here?
3. I've got a car, but I _____ (not / use) it much.
4. "Where _____ (Ricardo / come) from?" "From Cuba."
5. "What _____(you/do)? I'm an electrician."

6. It _____(take) me an hour to get to work. How long _____(it / take) you?
7. Look at this sentence. What _____ (this word / mean)?
8. David isn't very fit. He _____(not / do) any sport.

6. Գրել փոքրիկ պատմություն At the Office թեմայով՝ օգտագործելով հետևյալ բառերն ու բառակապակցությունները:

To be in time for, to get a lot of letters, to read, to translate

Սկզբում դժվարությունը կայանում էր նրանում, որ սովորողներին պետք էր բացատրել նոր մեթոդիկայով աշխատելը: Երեխաներից շատերը սովոր չէին զույգով աշխատելուն, ավելին՝ չունեին հաղորդակցային կարողություններ և ցանկություն միմյանց հետ համագործակցելու: Պատկերը էականորեն փոխվեց առաջին թեմատիկ աշխատանքից հետո:Այն սովորողների մոտ ,ովքեր ճիշտ և որակյալ փոխուսուցում էին կատարել (Ախյան Սյուզան, Սարգսյան Արաքսյա, Պետրոսյան Եվգենյա, Զաքարյան Մանե) ակնհայտ բարձր արդյունք գրանցվեց: Հետագայում որոշ սովորողների մոտ (Խաչատրյան Աննա, Բաբայան Էլեն), որոնք սկզբում ոչ մի բառ չէին խոսում, զարգացան համագործակցային կարողություններ, որի արդյունքում նրանք ոչ միայն կարողացան հաղորդակցվել իրենց ընկերների հետ, այլև պարզ արտահայտել իրենց մտքերը և հաճույքով սովորել:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Այսպիսով, համագործակցային ուսուցումը նպաստում է, որ սովորողները լինեն ավելի մոտիվացված, դառնան իրենց սեփական ուսուցման ակտիվ մասնակիցներ: Փոխուսուցումը հնարավորություն է տալիս, որ սովորողներն ավելին սովորեն և ավելի լավ հիշեն ինչ սովորել են: Սովորողների մոտ ձևավորվում է հաղորդակցման հմտություն, զարգանում է սովորողի պատասխանատվության զգացումը, միմյանց հաշվետու լինելու հատկությունը:

Իմ կիրառած մեթոդիկայի արդյունքում ես կարողացա բացահայտել, որ .

1. Թեմաների փոխհաղորդման մեթոդիկան նպաստում է սովորողների մոտ համագործակցային կարողությունների զարգացմանը, որոնք մեծ դեր են խաղալու նրանց հետագա անձնական և աշխատանքային ապագայի համար:
2. Սովորողներն ավելի արդյունավետ են սովորում , երբ սովորեցնում են մյուսներին, զարգանում է պատասխանատվության զգացումը և քննադատական մտածելակերպը:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. ՀՊՉ – էջ 2-6, Երևան 2020
2. Մկրտչյան Մ., Կրթության կազմակերպման կոլեկտիվ եղանակի կայացման հիմնահարցերը, Երևան, 2001թ.
3. Մկրտչյան Մ., Ուսուցման կոլեկտիվ եղանակի իրականացման մեթոդաբանական, տեսական և գործնական հարցերը, էջ 49, Երևան, 2011 թ.
4. Մկրտչյան Մ., Ուսուցման կոլեկտիվ եղանակի իրականացման մեթոդաբանական, տեսական և գործնական հարցերը, էջ 96, Երևան, 2011 թ.
5. Մկրտչյան Մ., Կոլեկտիվ ուսուցման տարրերը, մեթոդական ձեռնարկ ուսուցիչների համար, Երևան, 2009թ.
6. Մկրտչյան Մ., Ինքնակառավարումը կոլեկտիվ ուսումնական պարապմունքի կազմակերպման գործում, սեմինարի սղագրություն, Երևան, 2009թ. ապրիլ